**ENTERPRISE INCUBATOR FOUNDATION**

123 Hovsep Emin St., Yerevan 0051, Republic of Armenia
Phone: +374 10 21-97-97 • Fax: +374 10 21-97-77
E-Mail: info@eif.am • http://www.eif-it.com

**ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

Հովսեփ Էմինի 123, Երևան 0051, Հայաստանի Հանրապետություն
Հեռ. +374 10 21-97-97 • Ֆաքս +374 10 21-97-77
Էլ. փոստ: info@eif.am • http://www.eif-it.com

09.12.2014թ. N ՁԻՀ/ֆ-224

"ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3" ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում
կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

"ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3" ծածկագրով ընթացակարգի շրջանակներում "Ձեռնարկությունների ինկուբատոր" հիմնադրամի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված աշխատանքներ:

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ՁԻՀ-ՇՀԱՇՁԲ-14/1-11/3»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել "Ձեռնարկությունների ինկուբատոր" հիմնադրամ, ք. Երևան, Հ. Էմին123 հասցեով, մինչև 2014թ. դեկտեմբերի 19-ը, ժամը 11:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և գրանցում է Ջ. Թումասյանին (հեռ. 010219791): Հայտերը գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն "Ձեռնարկությունների ինկուբատոր" հիմնադրամի վարչական շենքում, ք. Երևան, Հ. Էմին 123 հասցեով, 2014թ. դեկտեմբերի 19-ին, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում "Ձեռնարկությունների ինկուբատոր" հիմնադրամի կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերումը, որը կազմված է 16 չափաբաժնից: Տպագրության աշխատանքների տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերով (ծանուցում):

Պայմանագրի գնի 100 տոկոսը Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Այս պայմանը չի գործում եթե Կապալառուն համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում՝ մինչև 2014թ. դեկտեմբերի 27-ը:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն.

բ. գնային առաջարկ (հավելված 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել "ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3" ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Տնօրեն
Բ. Ենգիբարյան